

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱ / CRIMINAL PROCEDURE AND CRIMINALISTICS / УГОЛОВНЫЙ ПРОЦЕСС И КРИМИНАЛИСТИКА



ՄԱՐԱԲՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր

MARABYAN SERGEY

*Associate Professor at the YSU Chair of Criminal Processing and Criminalistics
Candidate of Legal Sciences,
Judge of the Criminal Court of Appeal of the Republic of Armenia*

МАРАБЯН СЕРГЕЙ

*Доцент кафедры Уголовного процесса и криминалистики ЕГУ,
Кандидат юридических наук,
Судья Апелляционного уголовного суда РА*



ՆԱԶԱՐՅԱՆ ԺԵՆՅԱ

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավորի օգնական, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մագիստրոս

NAZARYAN ZHENYA

*Assistant to the Judge of the Criminal Court of Appeal of the Republic of Armenia,
Master of Law at YSU Faculty of Law*

НАЗАРЯН ЖЕНЯ

*Помощник судьи Апелляционного уголовного суда РА,
Магистр юридического факультета ЕГУ*

ՀԱՄԱՉԱՓՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ ԸՆՏՐԵԼԻՍ *

SOME PROBLEMS OF ENSURING PROPORTIONALITY IN THE CHOICE OF DETENTION AS A PREVENTIVE MEASURE IN THE CRIMINAL PROCESS OF THE REPUBLIC OF ARMENIA*

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ, СВЯЗАННЫЕ С ОБЕСПЕЧЕНИЕМ СОРАЗМЕРНОСТИ ПРИ ИЗБРАНИИ МЕРЫ ПРЕСЕЧЕНИЯ В ВИДЕ ЗАКЛЮЧЕНИЯ ПОД СТРАЖУ В УГОЛОВНОМ ПРОЦЕССЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ*

ՀՀ Սահմանադրությունը յուրաքանչյուր անձի (*անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից*) երաշխավորում է անձնական ազատության իրավունքը և սահմանում այն պաշտպանելու անհրաժեշտ երաշխիքները¹: Ինչը հասկանալի է. եթե

* Հոդվածը ներկայացվել է 16.04.2020, գրախոսվել է 10.06.2020, ընդունվել է տպագրության 17.06.2020:

* The article was presented 16.04.2020, was reviewed 10.06.2020, was accepted to publication 17.06.2020.

* Статья представлена 16.04.2020, рецензирована 10.06.2020, принята в печать 17.06.2020.

¹ Երաշխիքների մասին մանրամասն տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2019 թվականի մայիսի 7-ի ՍԴՈ-1459 որոշումը:



պաշտպանված չէ անձնական ազատությունը, ապա ավելորդ է խոսել անձի մյուս իրավունքների և ազատությունների պաշտպանվածության և իրականացման հնարավորության մասին, քանի որ անձի ազատության իրավունքը, մարդու այլ հիմնական իրավունքների հետ մեկտեղ, ՀՀ Սահմանադրությամբ ճանաչվում է անօտարելի և բարձրագույն արժեք¹ և անձի բնական իրավունքների համակարգում զբաղեցնում է առանցքային տեղ. անձնական ազատությունը հասկացվում է ոչ միայն ֆիզիկական ազատության իմաստով, որն իր մեջ ներառում է նաև՝ անձնական անվտանգությունը, առողջությունը պահպանելը, տեղաշարժվելու ազատությունը, զբաղմունքի և բնակության վայրի ընտրության ազատությունը, այլև հոգեբանական, բարոյական ազատության իմաստներով²: Այդուհանդերձ, կարևոր է նաև նկատել, որ անձնական ազատությունը չի կրում բացարձակ բնույթ և յուրաքանչյուր իրավական համակարգում (այդ թվում ՀՀ իրավական համակարգում) անխուսափելիորեն և օբյեկտիվորեն առաջանում են այնպիսի իրավիճակներ, երբ անհրաժեշտություն է առաջանում անձի ազատությունը սահմանափակել ի նպաստ այլ, ինչ-որ կենսականորեն առավել կարևոր շահերի, որոնք գերակայում են այդ իրավունքի նկատմամբ³: Հետևաբար, յուրաքանչյուր իրավական հոչակված պետության (ինչպիսին է նաև ՀՀ-ն) առաջնային խնդիրներից է՝ իրավական որոշակիության և իրավունքի գերակայության սկզբունքներին համապատասխան սահմանել այդ հիմնարար իրավունքի սահմանափակման համաչափությունն ապահովելու համար անհրաժեշտ օրենսդրական երաշխիքները, որպեսզի հնարավոր լինի ապահովել մրցակցող տարբեր շահերի ողջամիտ հավասարակշռությունը և բացառել անձի իրավունքների ոչ իրավաչափ սահմանափակման հնարավորությունը:

Համաչափության սկզբունքն ամրագրած ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ անձի հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումը կարող է համարվել համաչափ, եթե սահմանափակման համար ընտրված միջոցները (1) պիտանի և անհրաժեշտ են Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար, (2) համարժեք են սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Անդրադառնալով համաչափության սկզբունքին՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2010թ. հոկտեմբերի 12-ի ՍԴՈ-920 որոշման մեջ արձանագրել է, որ «(...) [Հ]անրային իշխանության իրականացումը նախևառաջ սահմանափակվում է իրավական պետության գաղափարից բխող՝ հասարակական հարաբերությունների կարգավորման համաչափության ընդհանուր սկզբունքով: (...) [Հ]ամաչափության սկզբունքն առաջին հերթին պահանջում է ապահովել արդարացի հավասարակշռություն սահմանվող պատասխանատվության միջոցի ու չափի և պատասխանատվության սահմանմամբ հետապնդվող իրավաչափ նպատակի միջև (...):»

Վերոգրյալից ակնհայտ է դառնում, որ համաչափության սահմանադրական սկզբունքը պահանջում է, որ անձի իրավունքը սահմանափակող իշխանական ակտը հետապնդի միայն օրինական նպատակ և լինի պիտանի, անհրաժեշտ ու համարժեք (չափավոր) այդ նպատակին հասնելու համար: Հանրային իշխանության հետապնդած նպատակը օրինական է, եթե այն

¹ Տե՛ս Ասլան Ավետիսյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԱՎԴ/0022/06/08 որոշման 18-րդ և 22-րդ կետերը:

² Այս հարցերի մասին առավել հանգամանորեն տե՛ս И.Л.Трунов, Л.К.Айвар, Применение мер пресечения в уголовном судопроизводстве. М., 2007. էջ 7-19:

³ ՀՀ քրեական դատավարությունում անձի ազատության իրավունքի սահմանափակումը կալանավորման կիրառմամբ պայմանավորված է, նախ՝ քրեական դատավարության համասոցիալական նշանակության խնդիրներով, այն է՝ ապահովել անձի, հասարակության և պետության պաշտպանությունը հանցագործությունից (Օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մաս), երկրորդ՝ այն հանգամանքով, որ անձի ազատության մեջ մնալը կարող է հանգեցնել սոցիալական և իրավական վնասակար հետևանքների, որոնք սահմանված են Օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում:



հատկապես նախատեսված է Սահմանադրությամբ և դրան համապատասխան ընդունված օրենքներով, ծառայում է ընդհանուր շահին և հանրության բարօրությանը: Օրինական նպատակին հասնելու համար ընտրված միջոցը պիտանի է, եթե դրանով հնարավոր է հասնել դրված նպատակին: Ընտրված միջոցն անհրաժեշտ է, եթե չկան նպատակին հասնելու ավելի մեղմ միջոցներ, այսինքն՝ միջոցներ, որոնք ավելի քիչ են սահմանափակում անձի իրավունքները (այդ պատճառով համաչափության սկզբունքը հաճախ անվանում են նաև չափից ավելի արգելքի սկզբունք): Ընտրված միջոցը համարժեք է, եթե այն ողջամիտ հավասարակշռության մեջ է գտնվում դրված նպատակի հետ, այսինքն՝ եթե այն չի առաջացնում այնպիսի բացասական հետևանքներ, որոնք ակնհայտորեն անհամարժեք են ցանկալի արդյունքին:

Անձնական ազատության իրավունքի սահմանափակման համատեքստում համաչափության սկզբունքն իր արտացոլումն է գտել Եվրադատարանի մի շարք որոշումներում, որի տեսանկյունից իրավունքներին միջամտությունը պետք է պայմանավորված լինի **հրատապ հասարակական պահանջներով**, լինի **համարժեք իրավական նպատակներին հասնելու համար**, իսկ փաստարկները, որոնք բերում է պատասխանող պետությունը միջամտության օգտին, պետք է լինեն **համոզիչ և անվիճելի**¹: Եվրադատարանը նշում է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի հիմնական նպատակն է անձի ազատության իրավունքի կամայական և անհիմն սահմանափակումը կանխելը (McKay v. the United Kingdom [GC], § 30), քանի որ ազատության և անձեռնմխելիության իրավունքն ունեն առաջնային նշանակություն «ժողովրդավարական հասարակությունում» Կոնվենցիայում ամրագրված իմաստով (Medvedyev and Others v. France [GC], § 76; Ladent v. Poland, § 45, 18 March 2008): Օրինականության սկզբունքը չի կարող բավարարված համարվել զուտ ներպետական օրենսդրության պահանջները պահպանելով, քանի որ ազգային օրենսդրությունը, ինքնին, կարող է չհամապատասխանել Կոնվենցիային, ներառյալ ընդհանուր սկզբունքները, որոնք ենթադրվում են կամ արտահայտված են դրանում (Pleso v. Hungary, § 59), իսկ 5-րդ հոդվածի 1-ին մասի համատեքստում Կոնվենցիայից բխող ընդհանուր սկզբունքներն են՝ իրավունքի գերակայությունը և դրա հետ կապված իրավական որոշակիության, համաչափության և կամայականությունից պաշտպանությունը (Simons v. Belgium (dec.), § 32):

«Չ գործող քրեական և քրեադատավարական օրենսդրության համալիր վերլուծությունը և համադրությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը սահմանել է մի շարք կանոններ կալանավորման կիրառմամբ անձի ազատության իրավունքի սահմանափակման համաչափությունն ապահովելու համար, որոնց շարքում էական նշանակություն ունեն հետևյալ օրենսդրական պահանջները.

(1) կալանավորումը մեղադրյալի նկատմամբ կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ կա հիմնավոր կասկած, որ նա կատարել է այնպիսի հանցանք, որի համար նախատեսվող ազատագրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է («քր. դատ. օր.»-ի 135-րդ հոդվածի 2-րդ մաս),

(2) մեղադրյալի նկատմամբ կիրառվող խափանման միջոցները չեն կարող պարունակել պատժի տարրեր («քր. դատ. օր.»-ի 18-րդ հոդված, մաս 5-րդ),

(3) մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը կալանքի տակ պահելու ժամկետը հաշվակցվում է ազատագրկման, կարգապահական գումարտակում պահելու ձևով նշանակված պատժին՝ մեկ օրը հաշվելով մեկ օրվա դիմաց, իսկ հանրային աշխատանքների դեպքում՝ մեկ օրը երեք ժամի դիմաց: Մինչև դատական քննությունը կալանքի տակ գտնվող անձի նկատմամբ տուգանքի, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու ձևով պատժի նշանակելիս դատարանը, հաշվի առնելով կալանքի տակ պահելու

¹ Նման մոտեցում է դրսևորել Եվրադատարանը, մասնավորապես, 1979 թվականի՝ Սանդի Թայման ընդդեմ Միացյալ Թագավորության գործով:



Ժամկետը, մեղմացնում է նշանակված պատիժը կամ լրիվ ազատում պատիժը կրելուց: (ՀՀ քր. օր.-ի 69-րդ հոդված, մասեր 3-րդ և 5-րդ):

Այս պահանջները համահունչ են նաև կալանավորման կիրառմամբ անձին ազատությունից զրկելու միջազգային չափանիշներին, մասնավորապես «Նախնական կալանք կիրառելու, դրա կիրառման պայմանների և խոշտանգումն ու բռնությունը բացառելու միջոցների մասին» ԵԽՆԿ (2006) 13 հանձնարարականում¹ ևս ուղղակիորեն սահմանված է, որ «(...) (3) Առանձին դեպքերում կալանավորումը պետք է կիրառվի բացառապես ըստ անհրաժեշտության և որպես ծայրահեղ միջոց, այն չպետք է կիրառել պատժիչ նպատակներով: (...) 6. Կալանավորումը պետք է հիմնականում կիրառվի այն անձանց նկատմամբ, ովքեր կասկածվում են ազատագրված ձևով պատրիժ նախատեսող հանցագործության կատարման մեջ: (...) 9. (1) Ցանկացած ռիսկի հաստատումը պետք է հիմնված լինի գործի անհատական հանգամանքների վրա, սակայն հատուկ ուշադրություն պետք է դարձվի՝ (...) բ. դատապարտվելու դեպքում նշանակվելիք պատժին, (...) 33. (1) Կալանավորման ժամկետը, որտեղ էլ այն իրականացված լինի, պետք է հաշվարկվի ազատագրված ժամկետի մեջ, եթե այն նշանակվի: (2) Ազատագրվումից զատ այլ պատրիժ նշանակելու դեպքում ևս պետք է հաշվի առնել կալանավորման տևողությունը պահելու ժամկետը: (...)»:

Մեր կարծիքով՝ վերոգրյալ քրեաիրավական պայմանների սահմանումն ինքնանպատակ չէ, դրանցով լուծվում են անձի իրավունքների պաշտպանության և երաշխավորման հետ կապված մի շարք խնդիրներ: Նախևառաջ, հիշյալ պայմանների սահմանմամբ ապահովվում է քրեադատավարական հարկադրանքի և քրեական պատժի համարժեքությունը, որը հանդիսանում է իրավունքների սահմանափակման համաչափության սկզբունքի առանցքային բաղադրիչներից մեկը: Համաչափության տեսանկյունից քրեադատավարական հարկադրանքը չի կարող լինել առավել խիստ և առավել շատ սահմանափակել անձի իրավունքները, քան անձին սպառնացող պատիժն է, հակառակ դեպքում ոչ միայն ընտրված միջոցը չի համապատասխանի հետապնդած նպատակի պիտանիության և անհրաժեշտության չափանիշին (քրեական գործով վարույթի ընթացքում կանխել մեղադրյալի ոչ պատշաճ վարքագիծը և ապահովել դատավճռի կատարումը), այլև ընտրված միջոցի և սահմանափակվող հիմնական իրավունքի նշանակության համարժեքության (չափավորության) չափանիշին²:

Օրենսդրի նման մոտեցման հիմքում ընկած է նաև անմեղության կանխավարկածի սկզբունքի ապահովման պահանջը, որի տեսանկյունից, քանի դեռ անձի մեղավորությունը չի ապացուցվել օրենքով սահմանված կարգով և հաստատվել օրինական ուժի մեջ մտած դատավճռով (ՀՀ Սահմ. 66-րդ հոդված), ուրեմն նա չպետք է ենթարկվի իրավունքների և ազատությունների առավել մեծ սահմանափակումների, քան մեղավոր ճանաչվելու արդյունքում ակնկալվող պատժով նախատեսված սահմանափակումների ծավալն ու բնույթն է: Ի վերջո, կալանավորումն, ի տարբերություն պատժի, ունի վարույթային բնույթ³ և լուծում է վարույթային խնդիրներ, հետևաբար վարույթային խնդիրներ լուծելու նպատակով անձի իրավունքների սահմանափակ-

¹ Ընդունվել է Նախարարների կոմիտեի 2006 թվականի սեպտեմբերի 27-ին փոխնախարարների 974-րդ նիստում:

² Այս առումով ուշագրավ է մասնավորապես ԵԽՆԿ 80 Հանձնարարականի 7-րդ սկզբունքը, որը սահմանում է, որ մինչև դատը չի կարելի տալ կալանք կիրառելու թույլտվություն, եթե ազատագրվումը կարող է համարվել անհամաչափ միջոց ենթադրյալ հանցագործությանը և պատժին, որը հանգեցնում է նման հանցանք կատարելու: Թեև այս հանձնարարականն այլևս չի գործում՝ այն փոխարինվել է «Նախնական կալանք կիրառելու, դրա կիրառման պայմանների և խոշտանգումն ու բռնությունը բացառելու միջոցների մասին» ԵԽՆԿ (2006)13 հանձնարարականով, սակայն սկզբունքը չի փոխվել, որն ամրագրվել է քիչ այլ բովանդակությամբ հիշյալ հանձնարարականի մի շարք կետերում, որոնք վկայակոչված են վերևում:

³ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի մայիսի 11-ի թիվ ԵԿԴ/0744/06/10 որոշումը:



ման ծավալն ու բնույթը չեն կարող ավելին լինել, քան պատժի նպատակներով պայմանավորված իրավունքների սահմանափակման ծավալն ու բնույթն է:

Ինչպես իրավագիտորեն նշում է ՀՀ վճռաբեկ դատարանը՝ Տ.Վահրադյանի վերաբերյալ 2008 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ ԼԴ/0197/06/08 որոշման մեջ՝ «(...) կալանավորման նպատակն է՝ նախաքննության և դատական քննության բնականոն գործընթացի ապահովումը, քրեական գործի բնականոն քննությանը մեղադրյալի (կասկածյալի) դիմակայության կանխումը, դատավարական գործընթացին մեղադրյալի մասնակցության ապահովումը, ոչ թե նրան պարտելը կատարած հանցանքի, քննության ընթացքում դրսևորած ոչ պատշաճ վարքագծի համար: (...)»: Հետևաբար անձի նկատմամբ պատժից խիստ սահմանափակումներ պարունակող ցանկացած դատավարական հարկադրանքի միջոցի կիրառում խախտում է ինչպես նրա անմեղության կանխավարկածի, այնպես էլ իրավունքների սահմանափակման համաչափության սահմանադրական սկզբունքները: Եթե հաշվի առնվի նաև այն հանգամանքը, որ խափանման միջոցը չի կարող պարունակել պատժի տարրեր, ապա ակնհայտ է, որ պատժից խիստ սահմանափակումներ պարունակող ցանկացած դատավարական հարկադրանքի միջոց առնվազն չի համապատասխանում համաչափության սկզբունքին:

Վերոնշյալ քրեաիրավական պայմանների սահմանմամբ օրենսդիրը լուծում է նաև համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների ապահովման հետ կապված մեկ այլ կարևորագույն խնդիր ևս, որն առավելապես ունի գործնական բնույթ ու նշանակություն: Ըստ օրենսդրի տրամաբանության՝ կոնկրետ դեպքում իրավասու սուբյեկտները պետք է կալանավորումը կիրառեն որպես խափանման միջոց բացառապես այն դեպքում, երբ քրեական օրենքը թույլ է տալիս անձին մեղավոր ճանաչելու (մեղադրական դատավճիռ կայացնելու) դեպքում նրա նկատմամբ նշանակել ազատագրկման ձևով պատիժ, որպեսզի հնարավոր լինի կալանքի տակ պահելու ժամկետը հաշվակցել հնարավոր պատժի ժամկետի մեջ: Մենք բնավ այն կարծիքին չենք, որ յուրաքանչյուր դեպքում կալանավորման հարցը քննարկելիս պետք է ելնել անձին մեղավոր ճանաչելու (**մեղադրական դատավճիռ կայացնելու**) և ազատագրկման ձևով պատիժ նշանակելու կանխավարկածից, քանզի կալանավորումը չի կարող կանխորոշել հետագայում անձի մեղավորությունը մեղազրկված արարքում, առավել ևս նշանակվող «արդարացի պատիժը¹»՝ ինչպես իրավագիտորեն նշել է ՀՀ վճռաբեկ դատարանը², սակայն չենք կարող նաև չարձանագրել, որ եթե անձին մեղավոր ճանաչելու և ազատագրկման ձևով պատիժ նշանակելու **ողջամիտ** հավանականությունը բացառվում է, ապա խոսք լինել չի կարող կալանավորման մասին, հակառակ դեպքում կալանավորումը կլինի ինքնանպատակ և պարզապես պատժից միջոց քննության ընթացքում դրսևորած ոչ պատշաճ վարքագծի համար:

Մեր այս հետևությունը բխում է ոչ միայն օրենքից, որը հստակ ամրագրել է, որ կալանավորումը թույլատրվում է կիրառել այնպիսի հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձի նկատմամբ, որի համար նախատեսվող ազատագրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը

¹ ՀՀ քրեական օրենսգրքի վերլուծությունը ցույց է տալիս, որ անկախ նրանից, որ անձը գտնվել է նախնական կալանքի տակ, հնարավոր է նրա նկատմամբ նշանակել ազատությունից զրկելու հետ չկապված պատիժ, մասնավորապես տուգանք, հանրային աշխատանքներ և այլն: Հակառակ դեպքում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածում սահմանված չէր լինի մինչև դատավճիռ օրինական ուժի մեջ մտնելը կալանքի տակ պահելու ժամկետը ազատությունից զրկելու հետ չկապված պատիժներին հաշվակցելու կանոնները, օրինակ, հանրային աշխատանքների մեկ օրը երեք ժամի դիմաց, կամ այն կանոնը, որ տուգանքի, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու ձևով պատիժ նշանակելիս դատարանը, հաշվի առնելով կալանքի տակ պահելու ժամկետը, մեղմացնում է նշանակված պատիժը կամ լրիվ ազատում պատիժը կրելուց (մասեր 3-րդ և 5-րդ):

² Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ ԼԴ/0197/06/08 որոշումը:



մեկ տարուց ավելի է (ՀՀ քր. դատ. օր.-ի 135-րդ հոդվածի 2-րդ մաս), այլև Եվրադատարանի կողմից Կոնվենցիայի 5-րդ հոդվածին տրված մեկնաբանություններից և ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից որպես խափանման միջոց կալանավորում կիրառելու չափանիշների վերաբերյալ ձևավորված դիրքորոշումներից:

Նախ, թե՛ Եվրադատարանը, թե՛ Վճռաբեկ դատարանը նշում են, որ հիմնավոր կասկածի ապացուցման չափանիշը տարբեր է քննության տարբեր փուլերում. եթե սկզբնական կալանավորման համար պահանջվում է նվազ ապացուցողական շեմ, ապա քննության հետագա փուլերում բարձրանում է հիմնավոր կասկածի ապացուցման շեմը¹, ինչը, մեր կարծիքով, պայմանավորված է **հենց անձին մեղավոր ճանաչելու (մեղադրական դատավճիռ կայացնելու) հնարավորության գնահատման հանգամանքով:**

Երկրորդ՝ Ա.Սարգսյանի վերաբերյալ 2011 թ. դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0503/06/10 որոշման մեջ Վճռաբեկ դատարանը սահմանել է, որ անձի ազատության սահմանափակման դեպքում դատարանները, ի թիվս կալանավորման հիմքերի և այլ պայմանների, քննարկման առարկա պետք է դարձնեն նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ քրեական վարույթը բացառող հանգամանքների առկայության կամ բացակայության հարցը: Եթե կոնկրետ դեպքում առերևույթ առկա և կիրառելի են քրեական վարույթը բացառող հանգամանքներից որևէ մեկը, ապա կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ ժամկետը երկարացնելու կամ վերահաստատելու վերաբերյալ նախաքննության մարմնի ներկայացրած միջնորդությունը ենթակա է մերժման: Վճռաբեկ դատարանի վերոնշյալ որոշման հիմքում ընկած է այն գաղափարախոսությունը, որ խափանման միջոցները կարող են կիրառվել միայն սկսված և շարունակվող քրեական վարույթի ընթացքում, հետևաբար՝ եթե կոնկրետ քրեական գործով առկա է այնպիսի իրավիճակ, որ քրեական վարույթը կարող է ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածում սահմանված որևէ հիմքով բացառվել և հնարավոր չլինել անձին մեղավոր ճանաչել (մեղադրական դատավճիռ կայացնել) և նշանակել պատիժ, որի պարագայում հնարավոր չի լինի նաև՝ վերջնարդյունքում անձի կալանքի տակ գտնվելու ժամկետը հաշվակցել այդ պատժի ժամկետին (անկախ պատժի տեսակից), ապա կալանավորման կիրառումը կլինի անհամաչափ և ինքնանպատակ, քանի որ առերևույթ կխախտվի դրա կիրառմամբ հետապնդվող նպատակի և այդ նպատակին հասնելու միջոցի համարժեքության (չափավորության) սկզբունքը, այսինքն՝ այն չի լինի անհրաժեշտ և պիտանի հետապնդվող նպատակին հասնելու տեսանկյունից և փաստացի կկրի պատժիչ բնույթ, ինչն անթույլատրելի է անմեղության կանխավարկածի համատեքստում:

Երրորդ՝ ինչպես նշել է Եվրադատարանը՝ անձին ազատությունից զրկելը, այնուհետև դատարանին ներկայացնելն այն դեպքերում, երբ նրա նկատմամբ քրեական գործ հարուցելու (Կոնվենցիոն իմաստով) նպատակ չի հետապնդում, հակասում է 5-րդ հոդվածի 1-ին կետի «c» ենթակետին², ինչը նշանակում է, որ 5-րդ հոդվածի 1-ին կետի «c» ենթակետի նպատակների համար անթույլատրելի է անձին զրկել ազատությունից՝ հիմնվելով միայն քրեական օրենքի դրույթի վրա, եթե ի սկզբանե մտադրություն չի եղել այդ օրենքը վերջնարդյունքում կիրառել տվյալ անձի նկատմամբ:

Պետք է նկատել, որ դատավորների շրջանում անցկացրած մեր անհատական հարցումները նույնպես ցույց տվեցին, որ իրականում նրանք հակված են բավարարել քննիչների միջնորդությունները՝ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին, միայն այն դեպքերում, երբ, ի թիվս այլ պայմանների և հիմքերի, ներկայացված նյութերի հիման վրա հնարավոր է գնահատել անձին մեղավոր ճանաչելու

¹ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԵԱՆԴ/0017/06/16 որոշումը:

² Տե՛ս Չուիլան ընդդեմ Իտալիայի գործով ՄԻԵԴ 22.02.1989 թ. վճիռը:



ողջամիտ հավանականությունը: Այդ մոտեցումն իր հաստատումն է գտել նաև դատական պրակտիկայում, որի ուսումնասիրությունները ևս ցույց տվեցին, որ մեծամասամբ քննիչների միջնորդությունները կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մերժվում են հիմնավոր կասկածի բացակայության հիմքով կամ այն պատճառաբանությամբ, որ առերևույթ առկա են ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածով նախատեսված քրեական հետապնդումը բացառող որևէ հանգամանք¹: Թերևս քիչ են այն դեպքերը, երբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ դրա ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունները մերժվում են ՀՀ քր. դատ. օր.-ի 135-րդ հոդվածով նախատեսված խափանման միջոց կիրառելու հիմքերի բացակայության պատճառաբանությամբ, ինչը մեզ հիմք է տալիս պնդելու, որ դատարանները խափանման միջոցի հարցը քննարկելիս ելնում են անձին մեղավոր ճանաչելու և պատիժ նշանակելու ողջամիտ հավանականությունից:

Այսպիսով՝ գաղափարը, որը դրված է քննարկվող քրեաիրավական պայմանների հիմքում հանգում է նրան, որ այն հանցագործությունների կատարման մեջ մեղադրվող անձանց կարելի է հասարակությունից մեկուսացնել խափանման միջոց կիրառելով, որի կատարման համար օրենքով նախատեսված է որոշակի ժամկետով ազատագրկման ձևով պատիժ և, որի կատարման համար հնարավոր է նրան մեղավոր ճանաչել (անձի նկատմամբ մեղադրական դատավճիռ կայացնել), նշանակել պատիժ և կալանքի տակ պահելու ժամկետը հաշվակցել այդ պատժին:

Համաձայնելով վերոնշյալ գաղափարախոսությանը՝ պետք է, այդուհանդերձ, փաստենք, որ օրենսդիրը բավարար չափով հետևողականություն չի ցուցաբերել և այդ գաղափարախոսությունը ամբողջությամբ չի իրացրել քրեական օրենսդրությամբ, որի արդյունքում մի շարք դեպքերում կալանավորման կիրառումը խախտում է ինչպես անմեղության կանխավարկածի, այնպես էլ համաչափության սկզբունքները, իսկ որոշ դեպքերում էլ ակնհայտորեն տուժում է հանրային շահը:

Նախևառաջ անհասկանալի է ՀՀ քրեական օրենսգրքի 57-րդ հոդվածում ամրագրված այն կանոնը, թե ինչու չի կարող անձի նկատմամբ նշանակվել կալանքի ձևով պատիժը, եթե նրա նկատմամբ մինչ դատավճիռ կայացնելը կիրառված է եղել կալանավորումը որպես խափանման միջոց: Այս կանոնի հնարավոր բացատրությունն այն է, որ պատիժը չի ծառայի իր նպատակին, քանի որ կկորցնի պատժիչ և դաստիարակչական նշանակությունը, որն արտահայտվում է կարճատևության և խիստ մեկուսացվածության մեջ: Կարծում ենք՝ նման մեկնաբանությունները տրամաբանական չեն և չեն համապատասխանում ինչպես համաչափության, այնպես էլ անձի իրավունքների բարձրագույն արժեք լինելու գաղափարին: Բանն այն է, որ խափանման միջոց կալանավորումը և կալանք պատժի տեսակը ունեն լիովին տարբեր նպատակներ և ուղղված են տարբեր խնդիրների լուծմանը, հետևաբար առնվազն ողջամիտ չէ այն հանգամանքը, որ խափանման միջոց կալանավորումը բացառում է կալանք պատժին:

Մեր կարծիքով՝ վերոնշյալ արգելքը հակասում է նաև ՀՀ քրեական օրենսգրքի պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներին, մասնավորապես ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված այն պահանջին, որ **հանցագործության համար նախատեսված պատիժներից առավել խիստը նշանակվում է, եթե նվազ խիստ տեսակը չի կարող ապահովել պատժի նպատակները:**

Այս կանոնի հիման վրա դատարանները կալանք պատիժը չեն նշանակում ոչ թե այն պատճառով, որ այն չի ծառայի պատժի նպատակներին, այլ այն պատճառով, որ օրենսդրական ուղղակի արգելք կա, ինչը գործնականում հաճախ հանգեցնում է նաև ՀՀ Սահմանադրության 71-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ հանցագործության և պատժի համաչափության սկզբունք:

¹ Տե՛ս, օրինակ՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 12.12.2018 թ., թիվ ԵԴ/0975/06/18 որոշումը, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 06.11. 2019 թ., թիվ ԵԴ/0888/06/19 որոշումը և այլն:



քի խախտման, քանի որ պրակտիկայում հաճախ են հանդիպում այնպիսի իրավիճակներ, երբ, կապված կոնկրետ հանցագործության հանգամանքներից, դատարանները կալանք պատիժ նշանակելու օրենսդրական արգելքի պայմաններում հարկադրված են լինում անձի նկատմամբ նշանակել կալանք առավել խիստ, կալանք առավել մեղմ պատիժ: Օրինակ, եթե անձը մեղադրվում է այնպիսի հանցագործության կատարման մեջ, որի համար օրենքով նախատեսված է պատիժ կալանքի և ազատազրկման ձևով և, եթե նա եղել է կալանավորված, օրինակ թեկուզև երկու օրով, ապա դատարանը նրա նկատմամբ պետք է նշանակի ազատազրկման ձևով պատիժ, ընդ որում՝ նվազագույնը 3 ամիս ժամկետով, քանի որ ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 59-րդ հոդվածի՝ ազատազրկման ձևով պատժի նվազագույն ժամկետը սկսվում է 3 ամսից, մինչդեռ ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 57-րդ հոդվածի՝ կալանք պատժի ժամկետը 15 օրից մինչև 3 ամիս է, այսինքն՝ անձի կալանավորված լինելը կոնկրետ դեպքում հանգեցնում է առավել խիստ պատժի: Մյուս դեպքում, եթե անձը մեղադրվում է այնպիսի հանցագործության կատարման մեջ, որի համար օրենքով նախատեսված է պատիժ կալանքի և տուգանքի ձևով, ապա նրա կալանքի տակ գտնվելու հանգամանքը բացառում է պատիժ կալանքի նշանակումը, որպիսի հանգամանքով պայմանավորված դատարանը հարկադրված պետք է նշանակի առավել մեղմ պատիժ՝ տուգանք, քանի որ այլ հնարավորություն չունի: Նման իրավիճակ հնարավոր է, երբ անձը մեղադրվում է, օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով և որևէ այլ հոդվածով նախատեսված հանցանքների կատարման մեջ և ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու հիմքով նրա նկատմամբ ընտրվում է խափանման միջոց կալանավորում: Արդյունքում ստացվում է, որ 118-րդ հոդվածի համար չի կարող նշանակվել կալանք և պետք է նշանակել տուգանք, քանի որ ազատազրկման ձևով պատիժ չի նախատեսում հոդվածը¹:

Վերոգրյալի հիման վրա կարծում ենք՝ պետք է այդ սահմանափակումը ՀՀ քրեական օրենսգրքի 57-րդ հոդվածից վերացնել, որպեսզի պատժի նշանակման կանոնները համապատասխանեն ինչպես անձի իրավունքներին, այնպես էլ հանրային շահին և միաժամանակ ապահովեն ինչպես հանցանքի և պատժի, այնպես էլ պատժի և խափանման միջոց կալանավորման համաչափության սահմանադրական սկզբունքների գործնական կիրառությունը:

Համաչափության սկզբունքի խախտման հետ կապված առաջացող հաջորդ խնդիրը վերաբերում է խափանման միջոց կալանավորման և անձի նկատմամբ նշանակվելիք պատժի կրման ռեժիմի անհամարժեքությանը:

ՀՀ քրեադատավարական օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը չի սահմանում որևէ հատուկ կանոն կալանավորման կիրառման համար այն հանցագործությունների դեպքում, որոնք թեև նախատեսում են պատիժ ազատազրկման ձևով մեկ տարուց ավելի ժամկետով, սակայն այդ հանցագործությունների համար նշանակվելիք պատիժը կրելու ռեժիմն օրենքի ուժով էականորեն մեղմ են կալանավորման ռեժիմից, այսինքն՝ պատժի կրման ընթացքում անձի իրավունքները առավել քիչ են սահմանափակվելու, քան խափանման միջոց կալանավորման կիրառման դեպքում: Ցայտուն օրինակ են անզգույշ հանցագործությունները, որոնց կատարման մեջ մեղավոր ճանաչված անձանց նկատմամբ նշանակված ազատազրկման ձևով պատիժը նրանք կրում են բաց տիպի ՔԿՀ-ում (ՀՀ քր. կատ. օր-ի 100-րդ հոդված), որը ենթադրում է, որ անձը գիշերային ժամերին կարող է տեղաշարժվել ՔԿՀ-ի նախատեսված տարածքում, իսկ ցերեկային ժամերին՝ ընդհուպ ՔԿՀ-ից դուրս (ՀՀ քր. կատ. օր-ի 103-րդ հոդված), մինչդեռ կալանավորումը հանդիսանում է անձի առավել խիստ մեկուսացում, որը բացառում է որևէ տեղաշարժ նախնական կալանքի վայրից դուրս, ավելին՝ անձը գտնվում է մշտական և խիստ

¹ Այս իրավիճակի տիպիկ օրինակ է ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում քննվող թիվ ԿԴՅ/0015/01/18 քրեական գործը:



հսկողության տակ («Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի հոդվածներ 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 33-րդ և այլն): Արդյունքում ստացվում է այնպես, որ գործող օրենսդրական լուծումների պայմաններում խափանման միջոց կալանավորումն առավել մեծ սահմանափակումներ է պարունակում և առավելագույնս է սահմանափակում անձի իրավունքները, քան մեղավոր ճանաչվելու դեպքում անձի նկատմամբ նշանակվելիք պատիժը, մինչդեռ պետք է լինի հակառակը, այսինքն՝ պատիժը լինի ամենախիստ միջոցը և առավելագույնս սահմանափակի անձի իրավունքները, քան խափանման միջոց կալանավորումը, քանի որ, ի տարբերություն կալանավորման, պատիժը, որպես պետական հարկադրանքի միջոց, նշանակվում է պետության անունից դատարանի դատավճռով արդեն իսկ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ և արտահայտվում է այդ անձին իրավունքներից ու ազատություններից օրենքով նախատեսված զրկմամբ կամ դրանց սահմանափակմամբ (ՀՀ քր. օր.՝ ի 48-րդ հոդված, մաս 1-ին):

Անդրադառնալով քննարկվող հակադրությանը՝ տեսության մեջ նշվում է, որ այն պետք է լուծել խափանման միջոց կալանավորման կիրառման քրեաիրավական պայմաններից մեկի փոփոխության ճանապարհով, մասնավորապես Դ.Զ.Ավետիսյանը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ անզգույշ հանցագործության համար որոշակի ժամկետով ազատագրկման դատապարտվելու դեպքում անձը պատիժը կրում է բաց ուղղիչ հիմնարկում, ու դատապարտյալները պահվում են ոչ խիստ մեկուսացման պայմաններում՝ գործնականում օգտվելով ազատ տեղաշարժի իրավունքից՝ գտնում է, որ անզգույշ հանցագործություններով կալանքը որպես խափանման միջոց ընտրելը պետք է թույլատրվի երեք տարուց ավելի ժամկետով հանցանք կատարելու մեջ մեղադրվող անձանց նկատմամբ, քանի որ, ըստ նրա՝ մեղադրյալին վերագրվող հանցանքի մեղքի ձևն ուղղակի կապի մեջ է գտնվում վերագրվող հանցագործության վտանգավորության աստիճանի հետ, որն էական նշանակություն կարող է ունենալ խափանման միջոցի տեսակն ընտրելու հարցում¹: Հեղինակի գնահատմամբ՝ իր առաջարկությունը կարող է բարձրացնել այդ խափանման միջոցի կիրառման արդյունավետությունը և հանդիսանալ կարևոր քայլ յուրաքանչյուր անձի ազատության և անձեռնմխելիության լիարժեք իրականացման ճանապարհին: Չէ՞ որ, ըստ նրա, որքան քիչ է կատարված հանցագործության համար սանկցիան, այդքան փոքր է այդ արարքի հասարակական վտանգը, այդքան քիչ է այն հավանականությունը, որ հանցանք գործած անձը կփորձի թաքնվել, կխոչընդոտի ճշմարտության բացահայտմանը կամ կկատարի նոր հանցագործություն²:

Թվում է՝ իրավաչափ է Դ.Ավետիսյանի մոտեցումը այն գաղափարի համատեքստում, որը հիմք է ընդունում որպես ելակետ՝ կալանավորման կիրառումը կապելով պատժի խստության հետ, սակայն, երբ հարցը դիտարկվում է այն տեսանկյունից, որ անկախ պատժի խստությունից այն կրելու ռեժիմն առավել մեղմ է, քան կալանավորման ռեժիմն է, ապա հեղինակի առաջարկությունը չի լուծում մեր կողմից բարձրացված խնդիրը: Եթե անգամ սահմանվի այնպիսի պայման, որ խափանման միջոց կալանավորումը կիրառվի միայն այն անզգույշ հանցագործությունների դեպքում, որոնց համար օրենքով նախատեսված ազատագրկման ձևով պատժի չափը գերազանցում է երեք տարին, ապա դրանից անզգույշ հանցագործությունների համար մեղավոր ճանաչված անձանց պատիժը կրելու կամ կալանավորման ռեժիմները չեն փոխվում, հետևաբար էության մեջ այդ առաջարկությունը չի ապահովի կալանավորման և պատժի համաչափությունը: Ուստի անհրաժեշտ է խնդրի այլ լուծում, քան առաջարկվողն է, իհարկե, չանտեսելով կամ բնավ

¹ Տե՛ս Ավետիսյան Դ.Զ., Կալանավորման հիմնահարցերը ՀՀ քրեական դատավարությունում, Երևան 2006, էջեր 128-130:

² Տե՛ս Ավետիսյան Դ.Զ., նույն տեղում:



չնսեմացնելով այդ առաջարկությունների իրավական արժեքը, քանի որ դրանք ևս կոչված են ապահովելու կալանավորման և պատժի համաչափությունը:

Մեր կարծիքով՝ նման իրավիճակի լուծում կարող է լինել, օրինակ այն, որ անզգուշությամբ կատարված հանցագործությունների դեպքում կալանավորման մեկ օրը հաշվվի մեկ ու կես օրվա դիմաց՝ ինչպես, օրինակ, հանրային աշխատանքների, փուլանքի կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու ձևով պատիժ նշանակելու դեպքում է հաշվարկման հատուկ կանոն սահմանված, ինչը մեր կարծիքով՝ հնարավորություն կտա ինչ-որ չափով փոխհատուցել խափանման միջոցի խստությունը և ապահովել պատժի և խափանման միջոցի համաչափությունը¹:

Քննարկվող համատեքստում էական նշանակություն ունի նաև այն հանգամանքը, որ գործնականում հաճախ են հանդիպում այնպիսի դեպքեր, երբ մեղադրյալը ակնհայտորեն կատարում է ՀՀ քր. դատ. օր.-ի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված գործողությունները և դրանով իսկ վտանգում նախաքննության և/կամ դատական քննության պատշաճ իրականացումը, սակայն նրա նկատմամբ հնարավոր չի լինում կիրառել խափանման միջոց կալանավորում, քանի որ նրան մեղսագրվող հանցանքը չի նախատեսում ազատագրկման ձևով պատիժ, կամ այդ պատիժը մեկ տարուց պակաս է, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված պայմանն ուղղակիորեն բացառում է նման հանցագործությունների կատարման մեջ մեղադրվող անձանց նկատմամբ խափանման միջոց կալանավորման կիրառումը: Առավել խնդրահարույց է այն իրավիճակը, որ նման դեպքերում անձն ակնհայտորեն չի ներկայանում նախաքննության մարմնի կամ դատարանի կանչով, ինչը հանգեցնում է նրան, որ բազմաթիվ քրեական գործերով կայացվում են քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումներ՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով:

Ակնհայտ է, որ հանրային շահի և տուժողների իրավունքների պաշտպանության համատեքստում որևէ նշանակություն չունի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կալանավորման կիրառման արգելքի էությունը, քանի որ դրա պատճառով առաջանում է առերևույթ անհամաչափություն կալանավորում չկիրառելու հետևանքների և հանրային շահի ու տուժողների իրավունքների պաշտպանության միջև, ուստի այդ հակադրությունը լուծելու համար, գտնում ենք, որ անհրաժեշտ է նախատեսել մինչև մեկ տարի ժամկետով ազատագրկման ձևով պատիժ նախատեսող հանցագործությունների համար մեղադրվող անձանց ոչ պատշաճ վարքագիծը կանխելու և նախաքննության և դատական քննության իրականացման խոչընդոտները վերացնելու գործուն կառուցակարգեր, որը հաշվի կառնի ինչպես մասնավոր, այնպես էլ հանրային շահը:

¹ Պետք է նկատել, որ թեև որոշակի տարբերություն կա նաև դիտավորյալ հանցագործությունների կատարման մեջ մեղադրվող անձանց նկատմամբ նշանակված պատժի կրման ռեժիմում, որը կապված է հանցագործության ծանրության աստիճանից և ռեցիդիվի առկայության կամ բացակայության հանգամանքից, սակայն քրեակատարողական օրենսդրության և «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի համալիր վերլուծությունը ցույց է տալիս, որ պատիժ կրող անձի և կալանավորված անձի իրավունքների սահմանափակման ծավալն ու բնույթն անձի ազատության իրավունքի համատեքստում այն աստիճան չեն տարբերվում, որպեսզի դրանց համար ևս սահմանվեն պատժի ժամկետի հաշվարկման առանձնահատուկ կանոններ՝ ինչպես անզգուշությամբ կատարված հանցագործությունների դեպքում է: Ի տարբերություն անզգուշությամբ կատարված հանցագործությունների, դիտավորյալությամբ կատարված հանցագործությունների համար օրենսդիրը սահմանել է պատժի կրման այնպիսի ռեժիմ, որը չի նախատեսում քրեակատարողական հիմնարկից դուրս գալու և ազատ տեղաշարժվելու հնարավորություն, ինչն էական գործոն է կալանավորման և պատժի համաչափության գնահատման համատեքստում:



Քննարկվող խնդիրը լուծելու համար ՌԴ քրեական դատավարության օրենսգրքում սահմանված է, որ կալանավորումը որպես խափանման միջոց կարող է կիրառվել նաև այնպիսի հանցագործությունների կատարման մեջ մեղադրվող անձանց նկատմամբ, որի համար օրենքով նախատեսված պատժի չափը պակաս է երեք տարուց (այս պայմանը համարժեք է ՀՀ քր. դատ. օր-ի 135-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված կալանավորման պայմանին), սակայն պայմանով, որ՝ 1) կասկածյալը կամ մեղադրյալը չունի մշտական բնակության վայր ՌԴ տարածքում, 2) նրա անձը պարզված չէ, 3) նրա կողմից խախտվել է նախկինում ընտրված խափանման միջոցի պայմանները, 4) նա թաքնվել է նախաքննական մարմնից կամ դատարանից (հոդված 108-րդ):

Կարելի է չհամաձայնել այս պայմաններից որոշների հետ, վիճարկել դրանց իրավաչափությունը, սակայն փաստն այն է, որ իրականում հաճախ այլ տարբերակ չի լինում, քան այդ անձանց նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորում կիրառելը, որպեսզի հնարավոր լինի ապահովել նրա մասնակցությունը քրեական գործով վարույթին: Այլ կերպ ասած՝ ՌԴ օրենսդրի մոտեցումը, լինելով հարցի լուծման ողջամիտ տարբերակ, այդուհանդերձ ունի որոշ խնդրահարույց պահեր, որոնք թույլ չեն տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում ևս սահմանել նման կանոններ:

Նախևառաջ՝ ստացվում է, որ անձի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումը կիրառվում է որպես պատասխանատվության միջոց ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու համար, ընդ որում՝ այնպիսի հանցանքի կատարման մեջ մեղադրանքով, որը կարող է անգամ չնախատեսել ազատագրվման ձևով պատիժ, որպիսի հանգամանքը արդյունքում հանգեցնում է անմեղության կանխավարկածի այն պահանջի խախտման, որ խափանման միջոցները չեն կարող պարունակել պատժի տարրեր, ավելին, ինչպես արդեն նշեցինք, խափանման միջոցը չի կարող լինել ավելի խիստ, քան ակնկալվող պատիժն է: Սակայն առավել խնդրահարույց է այն, որ մի շարք միջազգային փաստաթղթերով՝ ուղղակիորեն սահմանված է, որ մեղադրյալի հանձնում չի կարող իրականացվել այն հանցագործությունների վերաբերյալ գործերով, որոնց համար քրեական օրենքով նախատեսված պատժի ժամկետը չի գերազանցում մեկ տարին², ինչը նշանակում է, որ բոլոր դեպքերում նման արարքների մեջ մեղադրվող անձինք, եթե գտնվում են այլ երկրում և խուսափում են քրեական վարույթն իրականացնող մարմին ներկայանալուց կամ թաքնվում են քրեական վարույթն իրականացնող մարմնից, ապա հնարավոր չի լինելու նրանց նկատմամբ կիրառել խափանման միջոց կալանավորում և լուծել քրեական գործի վերջնական ընթացքը,

¹ Տե՛ս, օրինակ՝ «Հանձնման մասին» 13.12.1957 թվականի Եվրոպական կոնվենցիան, «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993 թվականի Մինսկի և «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 07.10.2002 Քիշնևի կոնվենցիաները և այլն:

² Օրինակ՝ «Հանձնման մասին» 13.12.1957 թվականի Եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի՝ հանձնում թույլատրվում է բացառապես այն հանցագործություններով, որոնք հայցող և հայցվող պետությունների օրենսդրությամբ պատժելի են ազատագրվման ձևով կամ կալանավորման մասին որոշմանը համապատասխան առավելագույնը ոչ պակաս, քան մեկ տարի ժամկետով կամ ավելի լուրջ պատժի: Նման պահանջ են սահմանում նաև «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993 թվականի Մինսկի կոնվենցիայի 56-րդ հոդվածի 2-րդ մասը և «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 07.10.2002 Քիշնևի կոնվենցիայի 66-րդ հոդվածի 2-րդ մասը, մասնավորապես ամրագրելով, որ «2. Քրեական պատասխանատվության ենթարկելու համար հանձնումը կատարվում է այնպիսի արարքների համար, որոնք հարցնող և հարցվող Պայմանավորվող կողմերի օրենքներով համարվում են պատժելի, և որոնց կատարման համար նախատեսվում է պատիժ 1 տարուց ոչ պակաս ժամկետով ազատագրվման ձևով կամ ավելի խիստ պատիժ:»:



որը, որպես հետևանք, հանգեցնելու է քրեական պատասխանատվության վաղեմության ժամկետների անցման:

Վերագրյալով պայմանավորված կարծում ենք՝ անհրաժեշտ է քննարկվող խնդրի լուծման այլ տարբերակ, որը կապահովի ինչպես հանրային և մասնավոր շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը, այնպես էլ չի խախտի անմեղության կանխավարկածի և համաչափության սկզբունքները և հնարավորություն կտա ապահովելու նախաքննության և դատական քննության իրականացումը նաև այն դեպքերում, երբ մեղադրյալը գտնվում է այլ երկրում և խուսափում է քրեական վարույթն իրականացնող մարմին ներկայանալուց կամ թաքնվում է քրեական վարույթն իրականացնող մարմնից:

Մեր կարծիքով նման դեպքերում պետք է օրենսդրորեն նախատեսել հնարավորություն իրականացնել վարույթ հեռակա կարգով՝ ելնելով այն հանգամանքից, որ անձն իր գործողություններով փաստացի հրաժարվում է իր՝ մի շարք իրավունքներից ու դրանց ապահովման դատավարական երաշխիքներից¹, որպիսի պայմաններում պետությունն իրավունք է ստանում առանց անձի մասնակցության իրականացնելու վարույթ, ընդհուպ՝ կայացնելու վերջնական դատական ակտ և ուղարկելու կատարման: Սա կարող է լինել համաչափության ապահովման լուծումներից մեկը, որը գործնականում կհեշտացնի թե՛ նախաքննության մարմնի, թե՛ դատարանի խնդիրը և միաժամանակ կապահովի ողջամիտ ժամկետներում գործերի քննության իրականացումը: Նկատենք, որ այս առաջարկությունն օրենքում հստակ ամրագրելու դեպքում կարող է կիրառվել, որպես կալանավորմանն այլընտրանքային միջոց և չի հակասի միջազգային չափանիշներին²: Տուժողի տեսանկյունից հեռակա դատավարությունը հնարավորություն է տալիս առնվազն հասնելու իր խախտված զույգային իրավունքների պաշտպանությանը, որը ներկայում գործող իրավակարգավորումների պայմաններում հաճախ հնարավոր չի լինում ապահովել, իսկ պետության տեսանկյունից այդ լուծումը կապահովի հանցագործություններից տուժողների արդարադատության մատչելիության սահմանադրորեն երաշխավորված իրավունքի ապահովման պոզտիվ պարտավորության կատարումը, միաժամանակ ապահովելով քրեական պատասխանատվության անխուսափելիությունը:

Նշենք, որ հեռակա դատավարության իրականացման իրավական հիմքեր ամրագրված են եղել դեռևս 1961 թվականի ՀՍՍՀ քրեական դատավարության օրենսգրքում, որի 239-րդ հոդվածում սահմանված էր, որ ամբաստանյալի բացակայությամբ գործի քննությունը թույլատրվում է, երբ ամբաստանյալը՝

1) գտնվում է արտասահմանում և խուսափում է դատարան ներկայանալուց.

2) միջնորդում է իր բացակայությամբ քննել այնպիսի հանցագործության վերաբերյալ գործը, որի համար որպես պատիժ ազատազրկում չի կարող նշանակվել:

Հեռակա դատավարության կարգավորում էր պարունակում նաև ԱՊՀ երկրների համար մշակված 1996 թվականի մոդելային քրեական դատավարության օրենսգրքը (այսուհետ՝ Մոդելային օրենսգրք), որը սակայն տարբերակում էր առանց ամբաստանյալի մասնակցության դատաքննություն իրականացնելու երկու տարբեր իրավական ռեժիմներ: Որպես ընդհանուր կանոն Մոդելային օրենսգրքի 353-րդ հոդվածը սահմանում էր, որ հեռակա դատավարություն կարող է իրականացվել, եթե 1) ամբաստանյալը խուսափում է դատարան ներկայանալուց կամ, եթե 2) ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործությունների վերաբերյալ գործերով առկա է ամբաստանյալի միջնորդությունն իր բացակայությամբ իրականացնել դատաքննությունը, պայմանով,

¹ Իրավունքներից հրաժարվելու հարցերի մասին մանրամասն տե՛ս Ա. Ղամբարյան, Իրավունքից հրաժարվելը և քրեադատավարական միջամտության հարցերը, Երևան 2018, էջեր 204-271:

² Տե՛ս նույն տեղում:



որ հեռակա դատաքննությունը չի խոչընդոտի գործի օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի քննությանը: Ընդ որում՝ նույն հոդվածը սահմանում էր, որ ամբաստանյալի բացակայությամբ դատաքննություն իրականացնելիս պաշտպանի մասնակցությունը պարտադիր է:

Սրանից զատ Մոդելային օրենսգրքը նախատեսում էր նաև հաշտարար դատավորի վարույթում գտնվող գործերով հեռակա դատավարության իրականացման հնարավորություն, որոնք վերաբերում են մասնավոր մեղադրանքի գործերին: Մասնավորապես, Մոդելային օրենսգրքի 449-րդ հոդվածը սահմանում էր, որ հաշտարար դատավորն իրավունք ունի հարգելի պատճառներով ամբաստանյալի չներկայանալու դեպքում գործը քննել նրա բացակայությամբ, եթե՝

1) ամբաստանյալը միջնորդում է գործը քննել հեռակա կարգով,

2) քրեական զանցանքը նախատեսող քրեական օրենսգրքի հոդվածի սակնցիան չի նախատեսում ազատագրվման ձևով պատիժ,

3) տուժողը, նրա ներկայացուցիչը չեն ներկայացնում լուրջ փաստարկներ դատաքննությանն ամբաստանյալի մասնակցության պարտադիր լինելու մասին:

Վերոգրյալ իրավական կարգավորումների միակ թերությունն այն է, որ դրանք կարգավորում են բացառապես դատական քննության փուլում առանց ամբաստանյալի մասնակցության վարույթ իրականացնելու հետ կապված հարցերը, մինչդեռ նախաքննության ժամանակ ևս բազմաթիվ են այն դեպքերը, երբ անձինք դրսևորում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված ոչ պատշաճ վարքագիծը և դրանով իսկ կազմալուծում նախաքննության իրականացումը, հետևաբար մենք այն կարծիքին ենք, որ պետք է օրենքով սահմանվի նաև հեռակա նախաքննություն իրականացնելու հնարավորություն, որպեսզի լուծուճը լինի ամբողջական և համակարգային: Ի վերջո, պետություն-անձ (տուժող) փոխհարաբերությունների տիրույթում էական նշանակություն չունի այն հանգամանքը, թե քրեական գործը նախաքննության, թե դատաքննության փուլում է, պետությունն ունի պոզիտիվ պարտավորություն ապահովելու տուժողի արդարադատության մատչելիության և խախտված իրավունքները վերականգնելու համար դատական պաշտպանության արդյունավետ միջոց ունենալու իրավունքը՝ անկախ քրեական վարույթի փուլից:

Կարծում ենք, որ քննարկվող գաղարփարախոսությունն ընդունելի լինելու պարագայում՝ կարելի է հստակ սահմանել հեռակա դատավարություն (թե՛ նախաքննություն, թե՛ դատաքննություն) իրականացնելու հիմքերն ու պայմանները, որոնք կապահովեն հանրային և մասնավոր շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը, դրանով իսկ լուծելով նաև մեր կողմից վերևում նշված անմեղության կանխավարկածի և համաչափության ապահովման հետ կապված խնդիրները:

Ակնկալվող պատժի և դատավարական հարկադրանքի համաչափությունը ենթադրում է ոչ միայն իրավունքների սահմանափակման բնույթի համաչափություն, այլև դատավարական հարկադրանքի ներգործության ժամկետների և ակնկալվող պատժի ժամկետների համաչափություն:

Դեռևս 18-րդ դարի կեսերին Չ.Բեկարիան նշում էր, որ որքան շուտ է հանցագործության համար պատիժը վրա հասնում և որքան մոտ է հանցանքի և պատժի միջև ընկած ժամանակը, այդքան այն արդար է և օգտակար: Արդար է այնքանով, որքանով, ազատությունից զրկումը, լինելով ինքնին պատիժ չպետք է նախորդի դատավճռի կայացմանը, եթե այն պայմանավորված չէ անհրաժեշտությամբ: Հետևաբար, նախնական ազատությունից զրկումը հանդիսանում է քաղաքացու սովորական ձերբակալում՝ մինչև նրան մեղավոր ճանաչելը, և քանի որ այդ ձերբակալումն էությանմբ պատիժ է, ուստի այն պետք է լինի հնարավորինս կարճ և առավել մեղմ: Ազատությունից զրկելու տևողությունը պետք է որոշվի այն ժամանակահատվածով, որն անհրաժեշտ



է գործի քննության համար և հերթականությամբ. ձերբակալվածն իրավունք ունի, որպեսզի իրեն դատեն (**դատավարություն իրականացվի – ընդգծումը մերն է**) առավել շուտ, քան ուրիշներին: Նախնական կալանավորման խստությունը չպետք է դուրս գա այն նվազագույնի սահմաններից, որն անհրաժեշտ է անձի փախուստը և ապացույցների ոչնչացումը կանխելու համար: Ամբողջ գործընթացը պետք է ավարտվի կարճ ժամկետներում¹:

Ռ.Վ. Օրլովը, անդրադառնալով կալանավորման տակ պահելու ժամկետներին, նշում է՝ կալանավորման տակ պահելու ժամկետների հիմնահարցը եղել և շարունակում է մնալ քրեադատավարական կարգավորման ամենասուր հարցերից մեկը: Մի կողմից այն պետք է քրեական վարույթն իրականացնող մարմիններին հնարավորություն տա առանց արհեստական խոչընդոտների փնտրել, գտնել և մերկացնել հանցագործություն կատարած անձանց, իսկ մյուս կողմից՝ այդ ժամկետը պետք է ողջամտորեն համաչափ լինի քրեական օրենսգրքով նախատեսված պատիժների ծանրությանն ընդհանրապես և քրեական օրենսգրքի կոնկրետ հոդվածի սանկցիային մասնավորապես: Բացի այդ, ըստ հեղինակի՝ միշտ առկա է քննչական սխալի վտանգ, որը հաստատվում է արդարացման դատավճռով, որի պարագայում անմեղ անձի երկար ժամանակով կալանավորումը վերածվում է կամայականության, անձի ազատության սահմանադրական իրավունքի կոպտագույն խախտման: Հեղինակի գնահատմամբ՝ կալանավորման ժամկետները չեն կարող որոշվել կամայականորեն: Օրենսդիրը պետք է, մի կողմից, հաշվի առնի իրավապահ մարմինների կողմից հանցագործությունը քննելու կարողությունը, իսկ մյուս կողմից հասարակության մեջ գոյություն ունեցող պատկերացումները անձի ազատությունը սահմանափակելու սահմանները հասարակական օգտակար նպատակների հասնելու համար²:

Ի.Վ. Գոլովինսկայան գտնում է, որ անձին կալանքի տակ պահելու կոնկրետ առավելագույն ժամկետի սահմանումը, նախ՝ դատավորներին կորդի առավել արագ քննել քրեական գործերը, երկրորդ՝ կնպաստի քննչական մեկուսարաններում քաղաքացիներին պահելու պայմանների և ժամկետների վերաբերյալ նրանց կողմից ներկայացվող բողոքների կրճատմանը, երրորդ՝ կկրճատի քրեական վարույթի ժամկետները և չորրորդ՝ կապահովի անձի և արդարադատության շահի միջև հավասարակշռությունը³:

Այս առումով հետաքրքրական է նաև ՌԴ Սահմանադրական դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 6-ի, թիվ 27-Պ որոշման մեջ ձևավորած այն դիրքորոշումը, որ քրեադատավարական հարկադրանքի միջոցների կիրառմամբ անձի իրավունքների սահմանափակման ժամկետները համակցության մեջ ոչ միայն չեն կարող գերազանցել, այլև չպետք է լինեն հավասար պատժի ժամկետին⁴:

Կալանքի տակ պահելու ժամկետի և պատժի ժամկետի համաչափության ապահովման իմպերատիվ կանոններ է սահմանում նաև «Նախնական կալանք կիրառելու, դրա կիրառման պայմանների և խոչտանգումն ու բռնությունը բացառելու միջոցների մասին» ԵԽՆԿ (2006) 13 հանձնարարականը⁵, որի համաձայն՝ «(...) 22. (2) յուրաքանչյուր դեպքում կալանավորման տևո-

¹ Տե՛ս Беккариа Ч. О преступлениях и наказаниях. М., 2004, էջ 115:

² Տե՛ս Орлов Р.В. Применение заключения под стражу в качестве меры пресечения на предварительном расследовании в российском уголовном судопроизводстве: Дисс. на соискание ученой степени канд. юрид. наук. Иркутск, 2008, էջեր 167-168:

³ Տե՛ս Головинская И. В. Институт мер пресечения: проблемы диверсификации и варианты их разрешения. URL: <http://отрасли-права.pf/article/20372> (12.12.2019):

⁴ Տե՛ս Постановление Конституционного Суда РФ от 06.12.2011 N 27-П «По делу о проверке конституционности статьи 107 Уголовно-процессуального кодекса Российской Федерации в связи с жалобой гражданина Эстонской Республики А.Т. Федина»:

⁵ Ընդունվել է Նախարարների կոմիտեի 2006 թ. սեպտեմբերի 27-ին, փոխնախարարների 974-րդ նիստում:



ղությունը չպետք է գերազանցի կամ չհամապատասխանի պատժի ժամկետին, որը կարող է նշանակվել կատարված հանցագործության համար: (...)»:

Ա. Դ. Պրոշլյակովը գտնում է, որ անհրաժեշտ է քրեական դատավարության օրենսգրքում սահմանել կանոն այն մասին, որ անձին կալանավորման տակ պահելու ընդհանուր ժամկետը չի կարող գերազանցել քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով նախատեսված ազատագրկման ձևով պատժի ժամկետը և այդպիսի անձը պետք է անհապաղ ազատ արձակվի անկախ այն բանից, թե գործը քրեական դատավարության որ փուլում է գտնվում¹: Մեկ այլ մոտեցման համաձայն՝ նպատակահարմար է կալանքի տակ պահելու ժամկետը սահմանափակել համապատասխան հանցագործության համար օրենքով նախատեսված պատժի առավելագույն ժամկետի կետով²: Այս մոտեցումը նախատեսված է եղել օրինակ Ռումինիայի Սոցիալիստական Հանրապետության քրեական դատավարության օրենսդրությամբ, որի 140-րդ հոդվածում ամրագրված էր, որ նախնական կալանքը դադարում է, եթե մինչև մեղադրական դատավճիռ կայացնելը դրա ժամկետը հասել է պատժի առավելագույն ժամկետի կեսին, որը օրենքով նախատեսված է տվյալ հանցագործության համար:

ՀՀ քրեական դատավարության օրենսդրության վերլուծությունից հետևում է, որ դրանում կալանավորման տակ պահելու առավելագույն ժամկետներ սահմանված են բացառապես նախաքննության փուլի համար, իսկ դատարանում այդպիսիք սահմանված չեն, ինչը գործնականում հաճախ է հանգեցնում այնպիսի վիճակի, որ անձինք բավականին երկար ժամկետներով մնում են կալանքի տակ՝ մինչև նրանց նկատմամբ կայացվում է դատավճիռ և լուծվում խափանման միջոցի հարցը: Դատական պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ անձը պահվում է կալանքի տակ այնքան ժամանակ, որ դատարանը դատավճիռ կայացնելիս նրան ազատում է նշանակված պատժից արդեն իսկ կալանքի տակ գտնվելու հիմքով կրած լինելու պատճառաբանությամբ (փաստացի ստացվում է, որ անձը խափանման միջոցի համատեքստում կրում է դեռևս չնշանակված պատժը), կամ անձն այնքան ժամանակ է գտնվել արգելանքի տակ, որ եթե այդքան ժամկետով պատիժ կրած լիներ, ապա կարող էր ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի կարգով դիմեր դատարան պայմանական վաղաժամկետ ազատվելու համար, կամ, եթե անձը մեղադրվում է այնպիսի հանցագործություն կատարելու մեջ, որի համար պատժի ժամկետը Համաներման ակտի հիման վրա կարող է կրճատվել, օրինակ, 1/3, 2/3 և այլն, որը հաշվարկելով կալանավորման տակ պահելու ժամկետի հետ պարզ է դառնում, որ անձի փաստացի արգելանքի տակ գտնվելը բավարար է այդ ժամկետի կրճատման դեպքում նրան պատժից ազատելու մասին որոշում կայացնելու համար և այլն: Թեև դատական պրակտիկայի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կան դատավորներ, ովքեր, հիմք ընդունելով քրեական օրենսգրքի առանձին ինստիտուտներ (պայմանական վաղաժամկետ ազատելը, Համաներումը և այլն), իրենց վարույթներում գտնվող գործերով որոշումներ են կայացնում խափանման միջոց կալանավորումը վերացնելու կամ փոփոխելու մասին³, սակայն դրանք եզակի դեպքեր են և պայմանավորված են զուտ կոնկրետ դատավորների կողմից օրենքի մեկնաբանության և կիրառման հանգամանքով, ինչը չի կարող կրել իմպերատիվ բնույթ և դրանով իսկ ապահովել ինչպես միջազգային չափանիշներին համապատասխան իրավակիրառական պրակտիկայի ձևավորումը, այնպես էլ քրեա-

¹ St' u Proshlyakov A. D. Взаимосвязь материального и процессуального уголовного права. Екатеринбург, 1997, էջ 70:

² St' u K. B. Muravyev. Меры процессуального принуждения-особые средства уголовно-правового воздействия: доктрина, применение, оптимизация. Монография. Омск, 2017, էջ 139:

³ St' u, օրինակ՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2017թ. հուլիսի 28-ի թիվ ԵԱԲԴ/0189/01/14 որոշումը, որով դատարանը հենց պայմանական վաղաժամկետ ազատման համար անհրաժեշտ չափով կալանքի տակ գտնվելու պատճառաբանությամբ ամբաստանյալին ազատել է կալանքից, կամ ՀՀ վերաքննիչ դատարանի 2020 թվականի մարտի 27-ի թիվ ԵԱԴԴ/0066/01/17 որոշումը, որով դատարանը, Համաներման կիրառման հնարավորությունը և այդ պայմաններում փաստացի կալանքի տակ գտնվելով պատժի համապատասխան չափը կրած լինելու պատճառաբանությունը հիմք ընդունելով, ամբաստանյալին ազատել է կալանքից:



կան պատժի ժամկետի և խափանման միջոց կալանավորման տակ պահելու ժամկետի համաչափությունը:

Հետևաբար գտնում ենք, որ խնդիրը պետք է լուծել բացառապես օրենսդրական կարգավորումների ճանապարհով: Մասնավորապես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում պետք է սահմանել դատական վարույթներում անձին կալանքի տակ պահելու առավելագույն ժամկետներ, որպեսզի այն համապատասխանի իրավական որոշակիության և կանխատեսելիության սկզբունքներին՝ բացառելով հեյացողական և գնահատողական մոտեցումը: **Մեր կարծիքով՝ դատական վարույթներում խափանման միջոց կալանավորման առավելագույն ժամկետի սահմանման համար ելակետ պետք է ընդունել ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսված այն ինստիտուտները, որոնք հնարավորություն են տալիս որոշակի ժամկետով արգելանքի տակ գտնվելու հանգամանքը հիմք ընդունելով անձին ազատել համապատասխան հանցագործության համար նշանակվելիք պարտից, օրինակ, համաներման հիմքով պարտի ժամկետի կրճատումը կամ պարտից լրիվ ազատումը, պարտից կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը, չավարտված հանցագործության համար պարտի նշանակելու կանոնները և այլն: Այլ կերպ ասած՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ արգելանքի տակ գտնվելու ժամանակահատվածը պետք է հաշվակցվի նշանակված պարտին (քր. օր-ի 69-րդ հոդված), ինչը նշանակում է, որ եթե կոնկրետ դեպքում առկա են այնպիսի հանգամանքներ, որոնք վկայում են այն մասին, որ անձն իր նկատմամբ նշանակվելիք պարտից չի կրելու կամ ազատվելու է դրանից, հետևաբար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում պետք է սահմանվեն կանոններ առ այն, որ նման դեպքերում անձի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը վերացվի (փոփոխվի), իսկ եթե անձն ազատության մեջ է նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց չկիրառվի:**

Annotation: In the discussed article the authors analyzed some problems of proportionality when choosing detention as a preventive measure. Based on the analysis of the RA current criminal, criminal procedure and penitentiary legislation, the authors came to the conclusion that the principles of proportionality and the presumption of innocence are often violated when choosing detention as a preventive measure. Therefore, due to the need to exclude these violations and ensure proportionality of the restriction of human rights with the use of detention, the authors propose to make certain amendments and additions to the Criminal Code of RA and the Criminal Procedure Code of RA.

Аннотация: В представленной статье авторы проанализировали некоторые проблемы соразмерности при выборе заключения под стражу в качестве меры пресечения. На основании анализа действующего уголовного, уголовно-процессуального и уголовно-исполнительного законодательства Республики Армения, авторы приходят к выводу, что принципы соразмерности и презумпции невиновности часто нарушаются при выборе заключения под стражу в качестве меры пресечения, поэтому, в связи с необходимостью исключить эти нарушения и обеспечить пропорциональность ограничения прав человека с использованием содержания под стражей, авторы предлагают внести некоторые изменения и дополнения в Уголовный и Уголовно-процессуальный кодексы РА.

Հիմնարարներ՝ պատիժ, կալանավորումը որպես խափանման միջոց, համաչափություն, անմեղության կանխավարկած, անձի իրավունքներ և ազատություններ, պատժի ժամկետ, կալանքի տակ պահելու ժամկետ:

Key words: punishment, detention as a preventive measure, proportionality, presumption of innocence, human rights and freedoms, the term of imprisonment, the term of detention.

Ключевые слова: наказание, содержание под стражей как мера пресечения, соразмерность, презумпция невиновности, права и свободы человека, срок лишения свободы, срок содержания под стражей.